

ԱԹԱՆԱՍԻՈՍԻ ՀԱԻԱՏԱՄՔ

կամ

ԱԹԱՆԱՍԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Սկսաւ գործածուիլ Հինգերորդ Դարուն եւ ամբողջացաւ Եօթներորդ Դարուն. չէ գրուած Աթանասիոսի կողմէ, որ ապրած էր Չորրորդ Դարուն (293-373) բայց իր յիշատակին համար իր անունը կը կրէ, որովհետեւ ան Երրորդութեան եւ Քրիստոսի աստուածութեան վարդապետութիւններուն հանրածանօթ պաշտպան մը եղած է:

1. Ամէն ով, որ կ'ուզէ փրկուիլ, ամէն բանէ առաջ կը պարտի ընդհանրական հաւատքը պահել.
2. Եւ ամէն ով, որ այս հաւատքը անվթար եւ անապական չպահէ, անտարակոյս պիտի կորսուի յաւիտենապէս:
3. Եւ ընդհանրական հաւատքը այս է. որ մենք կը պաշտենք մէկ Աստուած Երրորդութեան մէջ եւ Երրորդութիւն Միութեան մէջ:
4. Ո՛չ անձերը շփոթելով, ոչ ալ անոնց էութիւնը զատելով (*կամ անջատելով*):
5. Քանզի Հայրը մէկ անձնաւորութիւն է, Որդին՝ ուրիշ եւ Սուրբ Հոգին՝ ուրիշ:
6. Բայց Հօր, Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն Աստուածութիւնը մէկ է, փառքը՝ հաւասար, վեհութիւնը՝ հաւիտենակից.
7. Ինչպէս Հայրն է, նոյնպէս է Որդին եւ նոյնպէս՝ Սուրբ Հոգին,
8. Հայրն՝ անեղ, Որդին՝ անեղ եւ Սուրբ Հոգին՝ անեղ (*չստեղծուած*).
9. Հայրն՝ անչափ, Որդին՝ անչափ եւ Սուրբ Հոգին՝ անչափ (*անչափ, անհուն, անսահման*):
10. Հայրն՝ յաւիտենական, Որդին՝ յաւիտենական եւ Սուրբ Հոգին՝ յաւիտենական:
11. Եւ սակայն, երեք յաւիտենական չեն, այլ՝ մէկ յաւիտենական.
12. Նոյնպէս չեն երեք անեղ, ոչ ալ՝ երեք անչափ, այլ՝ մէկ անեղ եւ մէկ անչափ:
13. Նոյնպէս Հայրը ամենակարող է, Որդին՝ ամենակարող եւ Սուրբ Հոգին՝ ամենակարող.
14. Եւ սակայն, երեք ամենակարող չեն, այլ՝ մէկ ամենակարող:
15. Այսպէս, Հայրն Աստուած է, Որդին Աստուած է եւ Սուրբ Հոգին Աստուած է.

16. Ու սակայն, երեք Աստուածներ չեն, այլ՝ մէկ Աստուած:
17. Նոյնպէս Հայրը Տէր է, Որդին Տէր է եւ Սուրբ Հոգին Տէր է:
18. Եւ սակայն երեք Տէրեր չեն, այլ՝ մէկ Տէր:
19. Քրիստոնէական ճշմարտութիւնը մեզ կը ստիպէ, որ անոնցմէ իւրաքանչիւր անձնաւորութիւն, մէկ առ մէկ, Աստուած եւ Տէր դաւանինք:
20. Այսպէս, ընդհանրական կրօնքը մեզի կ'արգիլէ ըսել, թէ երեք Աստուածներ կամ երեք Տէրեր կան:
21. Հայրը ո՛չ մէկէն շինուած է, ո՛չ ստեղծուած, ո՛չ սերած:
22. Որդին միայն Հօրմէն է. ո՛չ շինուած, ո՛չ ստեղծուած, բայց սերած:
23. Սուրբ Հոգին Հօրմէն եւ Որդիէն է. ո՛չ շինուած, ո՛չ ստեղծուած, ո՛չ ալ սերած, այլ՝ բխող:
24. Ուրեմն, մէկ Հայր կայ, ո՛չ երեք հայրեր. մէկ Որդի, ո՛չ երեք որդիներ. մէկ Սուրբ Հոգի, ո՛չ երեք սուրբ հոգիներ:
25. Եւ այս երրորդութեան մէջ ո՛չ մէկը առաջին է կամ յետին, ու ո՛չ մէկը՝ աւագ կամ կրտսեր:
26. Այլ՝ երեք անձերը ամբողջութեամբ իրարու յաւիտենակից ու հաւասար են:
27. Ուրեմն, ամէն բանի մէջ, ինչպէս նախապէս ըսուեցաւ, Միութիւնը Երրորդութեան մէջ ու Երրորդութիւնը Միութեան մէջ պէտք է պաշտուի:
28. Ուրեմն, ան, որ կ'ուզէ փրկուիլ, կը պարտի Երրորդութեան վերաբերեալ այսպէս հաւատալ:
29. Նաեւ յաւիտենական փրկութեան համար պէտք է մեր Տէր Յիսուս Քրիստոսի մարդեղութեան հաւատարմօրէն հաւատալ:
30. Քանզի այս է ուղիղ հաւատքը, որ կը պարտինք հաւատալ ու դաւանիլ, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին, թէ՛ Աստուած է, թէ՛ մարդ.
31. Աստուած է Հօրը էութենէն, սերած յաւիտենականութենէն առաջ, իսկ մարդ՝ մօրը էութենէն, աշխարհի մէջ ծնած.
32. Կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ, բանական հոգիով եւ մարդկային մարմինով գոյացող:
33. Հօրը հաւասար ըստ իր աստուածութեան, Հօրմէն ստորադաս ըստ իր մարդկութեան:
34. Որ, թէեւ Աստուած եւ մարդ է, չէ՛ երկու, այլ մէկ Քրիստոս:
35. Սակայն մէկ է, ո՛չ աստուածային էութիւնը մարդկային մարմինի վերածուելով, այլ՝ իր Աստուածութեան մէջ իր վրայ մարդկային բնութիւն առնելով (*ըստանձնելով*):

36. Լիովին մէկ է, ո՛չ եութեան շփոթութեամբ, այլ՝ անձի միաւորութեամբ:
37. Որովհետեւ, ինչպէս բանական հոգին եւ մարմինը մէկ մարդ են, նոյնպէս Աստուած եւ մարդ մէկ Քրիստոս է.
38. Որ մեր փրկութեան համար չարչարուեցաւ, Դժոխք իջաւ, երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ,
39. Երկինք համբարձաւ եւ Ամենակարող Հայր Աստուծոյ աջ կողմը կը նստի.
40. Անկէ (*երկինքէն*) պիտի գայ դատելու ողջերն ու մեռածները:
41. Որուն գալստեանը բոլոր մարդիկ յարութիւն պիտի առնեն իրենց մարմիններով:
42. Եւ իրենց գործերուն համար հաշիւ պիտի տան:
43. Եւ անոնք, որոնք բարին գործած են յաւիտենական կեանքի պիտի երթան ու անոնք, որոնք չարը գործած են՝ յաւիտենական կրակի:
44. Այս է ընդհանրական հաւատքը, որ եթէ մէկը հաւատարմօրէն ու հաստատօրէն չի հաւատայ, չի կրնար փրկուիլ:

* * * * * ՎԵՐՁ * * * * *